

Յատակագիծ կարուոյ. Անւոյ. — Plan de la Cathédrale.

չափ խաչ արծաթեայ՝ պահապան քաղաքին. իբրև 'ի 20 ամաց հետէ կործանեալ է գմբէթս. այլ ամենայն մասունք եկեղեցւոյն կանգուն կան, վայելչագեղ կիսաբոլոր և տանախորշ խորանաւն, և կրկնայարկ մատրամբք կամ աւանդատամբք յաջմէ և յահեկէ, և երիւք դրամբք. 'ի վերայ հարաւայնոյն կայ արձանագիր յիշատակի դշխոյին կառուցողի և Սարգսի կաթուղիկոսի, և յերի՝ ժամացոյց արևանիշ հայկական տառիւք ժամատրոհեալ. և այլ բազում արձանագրութիւնք, զորս ծանր համարիմք աստ յիշատակել։

Յարևելից կուսէ կաթուղիկէս իբրև 500' հեռի կայ աւերակ եկեղեցի Տիրամոր կամ Թերևս սրբոյն Հռիփսիմեայ, զոր մերձ 'ի կաթուղիկէն ասեն լինել պատմիչք. յելից հարաւոյ սոցա կանգուն կայ հոյակապ բոլորշի եկեղեցի Փրկչի. որ 'ի ներքուստ կողմանէ յուրթ կիսաբոլորս տրոհեալ է, սիւն 'ի մէջ բաժանմանցն ունելով, յորոց վերոյ ամփոփեալ ձեղունն բառնայ զմանեկաձև բոլորեալ գմբէթն սրածայր, 12 շուրջ պատուհանաք, յորոց միջոցս երևին նկարէն պատկերք աղաւաղեալք. 40' են տրամագիծի տաճարիս, և ամբիոն մի քարեայ 'ի վերայ հարաւային դրանն սանդխովք յորմամիջին ելանելի անգր, և անտի 'ի վեր ցառաստաղն։ Ապլղարիպ հօրեղբայր Գրիգորի Մագիստրոսի շինող է տաճարիս յամին 1037։ — Նման սմին՝ այլ փոքրկագոյն եկեղեցի ուրթանկիւնի կայ և յարևմտակողմն քաղաքին մերձ 'ի միջնաբերդն իբր 28' տրամագիծաւ, և 14 պատուհանաք գմբէթին, պարզ 'ի ներքուստ, ամենազարդ արտաքուստ։ — Կայ և այլ եկեղեցի 12-անկիւնի արտաքուստ և վեցաբոլորակ 'ի ներքուստ 38' տրամագծաւ, յարևմտակողմն առ պարսպաք քաղաքին որ հայի 'ի Զորն Ծաղկոցաց։ — Առ քարափամբ նորին ձորոյ 'ի հիւսիսոյ արքունեացն կայ վայելչաձև և անաղարտ մնացեալ եկեղեցին Ս. Գրիգոր 'ի բարձրագիտակ վայրի, շինեալ յամին 995 'ի Գրիգորէ որդւոյ Ապուղամրի, կամաք Գագկայ Ա։ — Յարևելից նորին ընդ մէջ անձկագոյն մասին քաղաքին և կրկին ձորոցն Ախուրեան և Ծաղկոցաց՝ կան սխրալի նշխարք երկուց կործանեալ մատրանց. — հուպ և կից նոցին՝ Առաքելոց եկեղեցին. սաքաշէն է սա ձեղուամբ և ոչ գմբեթաւոր, և խորան նորա ոչ բեմիւ զատուցեալ 'ի բարձու, այլ 'ի յատակի, խուռն և խիտ քանդակաք 'ի ներքոյ և արտաքոյ, շինեալ ոչ յետ 1033 թուականի։ Վայելչագունի ևս եկեղեցւոյ սակաւ նշխարք Ճարտարագործք մերձ կան յԱռաքելան։ — Յելից հարաւոյ սոցա մերձագոյն 'ի քարափն գետոյն կայ Լուսաւորչի մենաստանն աւերեալ, և եկեղեցին կանգուն և նորափայլ քան զայլսն, զի և յետ յիշեալսդ շինեալ է յամին 1215, երկայնաձև խաչաթև ինն և գմբեթաւոր, բազմապատիկ դրուագաքն և միւսիոն զարդուք և պատկերաքն, վասն որոյ և Նգերաբ-ուիչ կոչի, և թուի 'ի Յունաց նկարագործեալ, քանզի և յունական արձանագիրքն և վերջիք դատանին 'ի նմա. բայց յառաջ շինեալ էր անդ այլ եկեղեցի Մարան Աստուածածին կոչեցեալ՝ ըստ արձանագրին։ Ընդ եկեղեցեաւս այսուիկ է դուռն մի, տիպ գետագնաց ուղւոյն՝ զոր յիշեցաք 'ի վերոյ։ Իսկ յարևելից կուսէ ձգի սալայատակ և կամարակապ ճա-